Ավետիք Իսահակյան

Ա՞խ, կանանչներ, դուք արևերես ելաք

«Ա՞խ, կանանչներ, դուք արևերես ելաք,
Յարաբ բալես ե՞րբ կելնի բանտեն…»

Կըռունկները շարա՞ն – շարա՞ն
«Կը՞ռռ, կը՞ռռ» կանչին ու եկան.
«Գարունն եկա՞վ, գարունն եկա՞վ»
Անուշ կանչին ու եկան…

-«Ջա՛ն, ջա՛ն, մեռնիմ ձեր ձենիկին,
Ա՛յ կռունկներ, նըխշուններ,
Յարա՛բ տեսա՞ք իմ բալիկին,
Յարա՛բ խաբար չե՞ք բերել:

Բալիս կապին, բանտը դըրին,
Տարին եկավ, բոլորավ,
Խաբար չունիմ, դադար չունիմ,
Աչքս ճամփին ծով կըտրավ:

Գարունն եկավ, - արևերես
Ելան ծիլ ու ծաղիկներ.
Ա՞խ, յարաբ ե՞րբ ազիզ բալես
Կելնի բանտեն, կըռունկնե՞ր…

Կռունկները շարա՞ն – շարա՞ն
«Կռ՞ռռ, կռ՞ռռ» կանչին ու եկան,
«Գարունն եկա՞վ, գարունն եկա՞վ»…
Անուշ կանչին ու անցան…

1897
Ալեքսանդրապոլ